Երկուշաբթի, 9 Նոյեմբեր, 2026

Տէրունական Աղօթք

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, փուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Յոյս իմ ես դու տէր քաւիչ յանցանաց իմոց.

մի անտես առներ զբղխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստուած:

ԱՂՕԹՔ

Տէ՛ր Աստուած, ողորմած եւ գթառատ Հայր, Քու մեծ ողորմութեանդ ապաւինելով՝ մեր աղօթքը Քեզի բարձրացնելով, կը խնդրենք, որ երբ մեր սրտերը ծանրանան վիշտերով, երբ մեր ուժերը տկարանան եւ մեր հոգին տառապի, Դո՛ւ եղիր մեր ապաւէնն ու մխիթարութիւնը: Սորվեցո՛ւր մեզի չարիին չարիով չպատասխանելու, այլ՝ Քու սիրովդ յաղթել ատելութեան, Քու ներողամտութեամբդ՝ անիրաւութեան, եւ Քու խաղաղութեամբդ՝ ամէն խռովութեան: Կը փառաբանենք Քեզ, Տէ՛ր, ոչ միայն խաղաղութեան օրերուն, այլ նաեւ նեղութեան եւ փորձութեան մէջ, որովհետեւ Դուն մօտ ես խոնարհ սրտերուն եւ երբեք չես լքեր Քեզի ապաւինողները: Որովհետեւ Քուկդ է փրկութիւնը, Քուկդ է ողորմութիւնը եւ Քուկդ է յաւիտենական փառքը: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուա-ծածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստ-ուած մեր, կեցո՛ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց ալքայութիւն:
Արի Աստուած հարցն մերոց, որ ապաւէն եւ նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՍԱՂՄՈՍ 109

ԴԱՒՆԱՁԱՅ ՀՈԳԻԻ ՄԸ ՊՈՒԹԿՈՒՄԸ 109:20-31

Այս պիտի ըլլայ Տիրոջ կողմէ վարձատրութիւնը անոնց՝
որոնք ինծի դէմ բանսարկութիւն կ՛ընեն,
անոնց՝ որոնք ինծի դէմ կը չարախօսեն:
Բայց դուն, ով Տէր, իմ Տէրս, օգնէ ինծի, ինչպէս վայել է անունիդ,
ազատէ զիս, որովհետեւ բաղցր ես դուն եւ ողորմած:
Վշտահար եմ ու չքաւոր, եւ վիրաւոր է սիրտս:
Անհա արդէն կը չքանամ իրիկնային ստուերի պէս,
հովէն ֆշուած մարախի մը պէս:
Ծոմ պահելէն ծունկերս տկարացեր են, կաշի-ոսկոր մնացեր եմ:
Նախատինքի առարկայ դարձեր եմ մարդոց,
երբ զիս կը տեսնեն՝ իրենց գլուխը կը շարժեն:
Օգնէ ինծի, Տէր իմ Աստուած, փրկէ զիս, դուն՝ որ համակ սէր ես:
Թող մարդիկ գիտնան՝ թէ դուն ըրիր ասիկա, թէ դուն փրկեցիր զիս, Տէր:
Թող անոնք անիծեն, դուն օրհնէ զիս,
թող անոնք վրաս յարձակին եւ ամօթահար ըլլան,
իսկ ես՝ ֆու ծառադ, թող ուրախանամ:
Ամբողջովին թող խայտառակուին անոնք որ զիս կը չարախօսեն,
եւ ամօթը վերարկուի պէս թող ծածկէ զանոնք:
Ես բարձրաձայն՝ անբաւ գոհութիւն պիտի յայտնեմ Տիրոջ,
եւ ժողովուրդին բազմութեան դիմաց իրեն օրհնութիւն պիտի երգեմ:
Որովհետեւ չքաւորին կողքին է միշտ անիկա,
դատաւորներու ձեռքէն փրկելու համար զանիկա:

ՕՐՈՒԱՆ ՆԻՒԹԸ

ՍԱՂՄՈՍ 109:20-31

Շարունակելով Սաղմոս 109:20-31 վերջին հատուածը: Անցեալ անգամ փորձեցինք տեսնել, որ այս Սաղմոսը Քրիստոսը ներկայացնող Սաղմոս է, Քրիստոս-Մարդը: Յաճախ կը մոռնանք այդ հանգամանքը, կա-տարեալ Աստուած եւ կատարեալ մարդ: Անոր համար ալ լաւ չենք հասկնար Քրիստոսի արտայայտութիւն-ները, որ իբրեւ Մարդ կ՛արտայայտուի: 20-րդ համարը, երբ ներկայացուց Յուդայի վախճանը, եւ բոլոր անոնց, որոնք այդ ընթացքով կ՛ընթանան, այդ է իրենց վարձատրութիւնը, ոչ թէ որովհետեւ այդպէս կը փափաքի, այլ այդ է պտուղը, վարձատրութիւնը, արդիւնքը իրենց արարքին: Շարունակելով օգնութիւն կը խնդրէ, որ Տէրը ազատէ, սակայն այդ ազատումը Աստուծոյ անունին, Անոր փառքին, ինչ որ այդ անունին վայել է: Որովհետեւ մարդուս ազատումը կախեալ չէ մարդուս գործերէն, այլ՝ Աստուծոյ ողորմած եւ քաղցր ըլլալէն: Եւ ատիկա Քրիստոս ցոյց տուաւ խաչին վրայ Իր պատարագումով: Աղքատ է եւ սիրտը վիրաւոր: Այդ աղքատութիւնը կա-մաւորաբար յանձն առաւ, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ, "Մեզի համար աղքատացաւ, որպէսզի մենք հարստանանք" Բ Կորնթ. 8:9: Սիրտը վիրաւոր, Գեթսեմանէի պարտէզը, ուր սրիտը վիրաւոր Յուդայի համար, եւ գալիք դէպքը որ պիտի պատահէր Գողգոթայի վրայ: Կամաւորաբար Իր կեանքը տալու, մարախի նման տեղէ տեղ փոխադրուելու կառավարիչէն թագաւորին երթալու, առանց իսկ ձայնը բարձրացնելու կամ ինք-զինք պաշտպանելու: Ծոմ պահելէն ծունկերը տկարացած, կաշի ոսկոր մնացած: Քրիստոս պահեց ծոմ Իր մկրտութենէն յետոյ, բայց այստեղ այդ ծոմապահութիւնը հոգիներու փրկութեան: 25-րդ համարը բառացի-տառացի Մտթ 27:39, կը նախատեն եւ իրենց գլուխը կը շարժեն: Ամբողջական վստահութիւն Աստուծոյ: Փրկե-ցիր զիս, ոչ թէ չխաչուելէն, այլ՝ յարութեամբ փրկեցիր զիս: Եւ այս բոլորը Աստուածային նախախնամութեան եւ աստուածային տնօրինում էր, եւ ոչ թէ չարին յաղթանակը: Ամէն ինչ Աստուծոյ կամքին ու ծրագրին համա-ձայն: Աշխարհին հրամցուցած եւ Աստուծոյ տուածը: Աստուած միշտ չքաւորին կողքին է զինք փրկելու դա-տաւորներու ձեռքէն: